

արիւն թափել : Այ՛ն մեզ , որ մենք ենք .
 Աւարդանայ , Ահաճանայ զաւակները :
 Չգիտեմ այս պարզ ճշմարտութիւն-
 ներին կհամոզուի պարոն Գ. Ե. թէ Ֆէ-
 լիէտօններով պիտի ինձ և իմ ծանաչած
 ճշմարտութիւններիս հալածէ :

ՉԱՀԱՆ ՇԱՀՈՒՆՆԱՆՅ .

է Բ. Բարսի :

ՆՈՒԷՐ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ .

Նոր Ասիականցի բարեպաշտուհի
 Տիկին Մարիամ Տրապիզոնցեան՝ իւր
 ստորական և գովելի ջերմեռանդութիւ-
 նից շարժուած և իմ բերանացի խնդրա-
 նօք յորդորուած՝ բարեհաճեցաւ նուիրել
 իմ վանհայրութեան յանձնուած սուրբ
 Գայիանեան վանքի եկեղեցու համար մի
 լարագոյն 75 ուրբի արժողութեամբ :
 — Սոյն բարեպաշտուհի Տիկինը երկու
 տարի սորանից առաջ նոյնպէս նուիր-
 րեց նոյն եկեղեցուն մի արծաթի ոսկէզօծ
 ձեռի խաչ 40 ո. արժողութեամբ , որոյ
 մասին իւր ժամանակ մատուցի իմ հրա-
 պարական շնորհակալութիւնը : Երդ
 ևս հրատարակելով վերոյիշեալ վարա-
 գոյրի նուիրատուութիւնը ի գիտութիւն
 Եզգի և ի բարի օրինակ բարեպաշտ ան-
 ձանց , և կրկին ու կրկին մատուցանելով
 իմ խորին շնորհակալութիւնը մեծարգոյ
 և բարեպաշտուհի Տիկին Մարիամ Տրա-
 պիզոնցեանին , բարեմաղթումեմ Ս. Աոյս
 Գայիանէից որ լինի բարեխօս առ Տէրն
 մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս՝ որ Աս
 ինքն արժանապէս վարձատրէ նորան աստ
 և ի հանգիստը ձեռնման :

Վանահայր Ս. Գայիանեան վանքի
 ՉԱՀԱՆ ՉԱՐԳՈՒՊԵՏ ԲԱՍՏԱՐԱՆՆԱՆՅ .

ԽՐԲԱԳՐԱԿԱՆ ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՐԻՒՆԵՐ .

— Մշակի մէջ Գ. Ե. (գուցէ անուան և
 ազգանուն) զխատառերու ստորագրու-
 թեամբ երկցած յօդուածներն յայտնի
 են ընթերցողաց :

Ըստ բաւականին հաւատարիմ աղ-
 բիւրէ հաղորդուած տեղեկութիւնէ կիմա-
 ցուի՝ զի Գ. Ե.՝ նոյն ինքն Գրէգոր Երթ-
 րանի է , որ և Մշակի Խճագիր — հրա-
 պարակոչն է :

Ելլ և այլ անուններով՝ կամ միայն
 անուան և մականուն զխատառերը՝ ինչ-
 պէս նաև աստղեր դնելով ի տեղի ստո-
 րագրութեան՝ կարելի և ներելի է յօ-
 դուածներ հրատարակել , բաւական է որ
 յօդուածագիրն երաշխաւորեալ առանձին
 ստորագրութիւն ունենայ խմբագրութեան
 մօտ , կամ թէ՛ խմբագրութեան ծանօթ
 մի անձն լինի : Աւ մեր փնտառքը այս չէ ,
 և ոչ յօդուածոց իմաստից առհասարակ
 ունեցած հակասական և բազմաշփոթ
 գոյնը՝ կամ թէ սոցին ներհակը , այլ սա
 է՝ թէ՛ որ և իցէ լրագրական թերթի մէջ
 տպուած ամեն յօդուած և լուր՝ երբ ի
 ներքոյ առանձին ստորագրութիւն չունի
 ուղղակի և պարզապէս խմբագիր — հրա-
 տարակողին խմբագրութեան և ստորա-
 գրութեան վերագրուելով՝ հարկ չկայ որ
 նոյն թերթի մէջ ամեն յօդուածոց ներ-
 քէ առանձին առանձին ստորագրութիւն
 դնէ խմբագիր — հրատարակողն : Այս
 խնդիրը այն ժամանակ միայն բացառու-
 թիւն կվերցնէ՝ երբ հրատարակութիւնն
 և խմբագրութիւնն մէկէն աւելի անձանցմէ
 բաղկացեալ ընկերութեան և կամ մի վա-
 նական միաբանութեան կվերաբերի , և այն

եթէ կանխատահման պայման ունենան՝ որ իւրաքանչիւր ընկեր առանձին և յատուկ ստորագրութեամբ յօդուածներ տան:

Ուստի եթէ արդարև ստորագէ մեզ հաղորդուած տեղեկութիւնն, Մշակի խմբագիր — հրատարակողին նաև խմբագրական տղիտութեան բաւական մի արդիւնք և ապացոյց հրատարակելը իրաւունք չէ՞. զի իւր թերթին մէջ՝ թէ և միայն Գ Ա զլխատառերով՝ իւր ստորագրութեամբ յօդուած կհրատարակէ, մինչդեռ անստորագիր ամեն յօդուած և լուր իւր խմբագրութեան և ուղղակի պատասխանատուութեան միայն կվերաբերի, զոր և ի վերջ թերթին զբաժ սովորական ստորագրութիւնով կհաստատէ:

Իսկ եթէ այսպիսի տղիտութեան արդիւնքը կամաւ և զիտմամբ է, Մշակի խմբագրութեան վերայ դարձեալ մինչանաւոր պակասութիւն կյաւելանայ և կծանրանայ, զոր գուցէ ինքն ևս մտածելով կարողանայ խմանալ՝ առանց մեր բացատրութեան կարօտ մնալոյ:

Ի Թ Ա Ն .

Ի Գ Ա Ն Ձ Ա Կ Է .

Արարատ ամազրի Բ-րդ թուոյն մէջ Գանձակից Չաքէոս անունով ստորագրած մի նամակի առթիւ աւելորդ չի համարեցի մի քանի խօսք ուղղել:

Չարմանալի բան է, որ մեր լրագրերի թղթակիցների մեծ մասը՝ մինչև այժմ էլ չեն կարողանում մի խոշոր սխալմունքից ազատ մնալ, ուստի՝ եթէ նոքա կամենում են մի որ և իցէ ճշմարտութիւն յայտնել, այդ ճշմարտութիւնը կորցնում է իւր իսկութիւնը՝ երբ հարցը կամ միակողմանի է քննում, կամ միայն արտաքին

երևոյթիցն է ստիպուած առանց քննելոյ երևոյթի պատճառը, կամ թէ ճշմարտութիւնը երեսին բռնած գործի հանգամանքը յարմարացնում է իւր կամքին:

Պարզենք մեր միտքը մի պարբերութեան դէմ:

Պ. Չաքէոսը ասումէ, « Գանձակայ ծխական ուսումնարանը, որի դասատան զոների բաց անոդը մի քանի րոպէ Բ-ից Բ-ը Տէր ասելու է պատաւորվում, ճշմարտան ասեմ, մեք չկարողացանք հասկանալ թէ Պարոնը գորանով ի՞նչ է ուղում ասել, որի մասին կլինդրէի որոշակի յայտնել իւր միտքը: « Իսկ պատրաստական դասատան նիւթերը անձրևի և ձիան տակ է փթում, որի շինող վարպետը ամեն օր յաջորդի սննեակը ուխտ է գնում շնորհիւ . . . »:

Պատրաստական դասատունը, որի համար խօսումէ Պ. Չաքէոսը, Հոգաբարձութիւնը չէր շինում ուսումնարանապատկան գումարից, այլ շինումէ մի բարեպաշտի կամաւոր նուիրատուութիւնից, որը խոստացել էր անցեալ 1875 ամի Սեպտեմբերի 7-ն՝ ընծայել 500 ռուբ. Այդ գումարից Հոգաբարձութիւնը ստացել է կանխիկ 100 ռուբ. իսկ մնացեալն պէտք է ստանար հետզհետէ համաձայն շինութեանը: Այդ հիման վերայ Հոգաբարձութիւնը վարպետի հետ կապակցութիւն էր արել Նոյն ամի Հոկտեմբերի 25-ին. վարպետը համաձայն իւր պայմանագրին՝ կրք սկսեց շարունակել յանձն առած շինութիւնը տեղւոյս քաղաքական իշխանութիւնը արգելեց:

Հոգաբարձութիւնը՝ (որի նախագահն է տեղական Յաջորդը, բաղկանումէ մէկ քահանայից, երկու ուսումնականից և մի վաճառականից) խորհելուց յետոյ, եկաւ այն եղբակացութեան, որ եթէ գրագրութիւն բաց անի քաղաքական իշխանութեան հետ՝ գործը կերկարի, ուստի կարևոր համարեց այդ խնդրի լուծումն բերանացի խնդրել Պ. Նահանգապետից, բայց չյաջողվեցաւ, որից յետոյ ստիպուեց գրաւոր թղթաւութիւն խնդրել որից հարկն է, որ և իրաւունքը ստացաւ ներկայ 1876 ամի Մարտի 13-ին:

Ինչպէս վերևում ասացի, այդ դասատունը պէտք է շինվեր մէկ բարեպաշտի կամաւոր նուիր